

**Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(26 փետրվարի 2006 թ.)

*«Բանն որ ընդ Նոր Էութեան եւ համագոյ
Սուրբ Նոգոյն»:*

(Շարակնոց)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ, ամէն»:

Այսօրվա օրհնության շարականը նվիրված է Սուրբ Երրորդության խորհրդին և ասվում է. «Բանն որ ընդ Նոր Էութեան եւ համագոյ Սուրբ Նոգոյն», այսինքն՝ Բանը՝ Խոսքը, Լոգոսը, որ մեր Տեր Նիսուսի բնորոշումն է, Նոր էութեան հետ է և համագո Սուրբ Նոգուն:

Բուն Բարեկենդանի կիրակին է այս կիրակին: Վաղվանից Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում Ապաշխարության օրերն են սկսվում: Սրբազան շարականագիրը այսպեղ հիշում է դրախարային այն երջանիկ կյանքը, որ մեր նախահայրը և նախամայրը՝ Ադամը և Եվան, վայելում էին դրախարի փափկության մեջ, և նրանք երջանիկ էին այնպեղ, որովհետև ոչ մի մտախոհություն չունեին: Չէին մտախոհվում, թե վաղը ինչ գործ պիտի անեն, չէին մտախոհվում, թե վաղը ինչ պիտի ուրեն, ինչպես այժմ մենք ենք մտախոհվում՝ անհանգստանալով և մտածելով, թե վաղվա օրը ինչպես պիտի կարողանանք բարվոք և երջանիկ անցկացնել:

Ահա այսպիսի երջանիկ կյանք էին վայելում դրախարի փափկության մեջ մեր նախահայրերը: Մյուս կիրակի, սակայն, պիտի անդրադառնանք, թե ինչպես փորձության ենթարկվեցին և չդիմացան այդ փորձությանը, իրենց անհնազանդության պատճառով մեղքի մեջ ընկան, և այդ մեղքը, ադամական մեղքը, սերնդե սերունդ փոխանցվելով, եկավ-հասավ մեզ: Մկրտության ավազանի առջև մենք խոստովանում ենք մեր ադամական մեղքը և քավություն հայցում մեր Տիրոջից, որպեսզի Քրիստոս ադամական այդ մեղքը մեզ ների, քավության արժանացնի և այդպիսով մեզ պարարասարի՝ Քրիստոսը ընդունելու մեր մեջ:

Ապաշխարության օրերը արդեն սկսվում են Նայասարանյայց Առաքելական Եկեղեցու մեջ. խորանները փակվել են, երգեցողությունները կարարվում են ավելի խոնարհ ձևով: Սուրբ Պարարագը փակ խորանի ետև է կարարվում: Դա խորհրդանշում է, որ եկեղեցին քառասնօրյա պահեցողության այս շրջանին, ապաշխարության այս քառասուն օրերի ընթացքին, Ինքը ևս Իր պայծառությունից, Իր փառքից իջնում է, զիջում է, որպեսզի հավաքացյալ հոփը ևս ապաշխարության և պահեցողության միջոցով կարողանա արդարանալ և սրբությամբ մոտենալ:

Ապաշխարության այս շրջանի երրորդ օրը քրիստոնեական բոլոր Եկեղեցիներում անվանվում է մոխրի չորեքշաբթի, և այդ օրը, նկարի ունենալով նինվեացիների ապաշխարության շրջանը, հավաքացյալները իրենց ճակատին քսում են մոխիր և ապաշխարությունը այսպիսով սկսում են բուրբել: Ի՞նչ էր արդյոք սկիզբը այս մոխրոփ չորեքշաբթի օրվան:

Աստված Նովնան մարգարեին ասաց. «Գնա Նինվե և նինվեացիներին ասա, որ Աստուծո զայրույթը ձեզ վրա պիտի բռնանա, եթե չապաշխարեք և չարդարանաք Աստուծո առջև»: Նովնան մարգարեն, սակայն, խուսափեց Աստուծո այս հրահանգից և նավով գնալիս մեծ փոթորկի և ալեկոծության հանդիպեց: Երբ նավի վրա վիճակ զցեցին, թե ո՞վ է արդյոք մեղավորը, ո՞ւմ պատճառով այսքան բուռն ալեկոծության է ենթարկվում այս նավը, վիճակը Նովնանի վրա ելավ: Բռնեցին Նովնանին և զցեցին Միջերկրական ծովը, ուր և կետր ձուկը կուլ քվեց նրան և ինչպես մեր Տերը՝ Նիսու Զրիսպոս, գերեզմանի մեջ մնաց երեք օր, այնպես էլ Նովնանը կետր ձուկի փորի մեջ մնաց երեք օր: Այս երեք օրերի ընթացքին Նովնանը աղաղակում էր և ասում. «Տեր, փրկիր իմ անձը»: Եվ փրկվեց իսկապես. ձուկը դուրս նետեց Նովնանին Կիլիկիայի ծովեզերքը, որտեղից նա գնաց Նինվե: Այսպես քարոզեց, նինվեացիները ապաշխարության եկան, բուրձ հագան, իրենց գլխին մոխիր ցանեցին, որպեսզի կարողանան այդ ձևով արդարանալ, ապաշխարել և դարձի գալ:

Մեր ապաշխարության շրջանը, բնական է, պահեցողության մի շրջան պիտի լինի: Եկեղեցին հրահանգում է այս շրջանում մտեղենից և կենդանական ծագում ունեցող սննդից չօգտվել: Ընդհանապես բնությունը իր զարթոնքի մեջ կլինի այս շրջանին:

Նապկապես կենդանիները հղիացման շրջան կունենան: Նավանաբար մեր եռամեծ Նայրապետները այդ մասին մտածել են, որպեսզի կենդանական աշխարհից մենք մեզ զրկենք և այսպիսով թույլ տանք նաև կենդանական աշխարհին աճելու և բազմանալու: Պահեցողությունը, սակայն, միայն կերակրով չի սահմանափակվում: Մեր Նայրապետների բուն նպատակը այն է եղել, որ մենք կարողանանք ոչ միայն մեզ փրկապետել կերակրի պահքով, այլև կարողանանք մեր լեզուները զսպել, բարի գործեր անել, աղքատներին օգնել, չքավորներին ձեռք երկարել, կարիքի մեջ եղող որևէ մարդու աջակցենք: Եթե թերություններով օժտված ենք, ծխամոլ ենք, ծխելը դադարեցնենք գոնե քառասուն օր: Եթե այլ թերություններ և մոլություններ ունենք, կարողանանք դրանցից ձերբազապվել: Եթե ներքնաբանական վեճեր կան, մեր զավակները անպեր ենք թողել, անդրադարձի մի միջոց է ապաշխարության այս շրջանը, որպեսզի կարողանանք մաքուր և աստվածահաճո կյանքով ապրել և մեր մեղքերը քավել:

Ահավասիկ ի՞նչ է ուզում մեզանից Եկեղեցին: Եկեղեցու գլխավոր նպատակը այն չէ, որ մենք միայն օրենքը կարողանանք պահել, այլ հավաքանք մեր Տիրոջ՝ Նիսու Զրիսպոսին, Նրա Նարության, Նրա Նարության միջոցով մեզ նոր կյանք պարգևելու կերպին և միջոցին:

Եթե փառակերությամբ միայն օրենքը պահենք, փրկությունը մեզանից հեռու կլինի: Մենք պետք է խորապես հավաքանք, համոզումով հեղինակենք Նիսուսի կյանքին, և այդպիսով ապաշխարության այս շրջանը մեզ համար փրկության մի նոր առիթ կլինի:

Տեսնում եք, ինչպես Եկեղեցին ամեն փարի այս հնարավորությունն է ընձեռում, որպեսզի իր հոպը, իր ժողովուրդը անդրադառնա իր կյանքին և այդպիսով դեպ ապաշխարություն գնա՝ ապախաշարության և զոհողության միջոցով կարողանա փրկության հասնել՝ դիմավորելու համար հարուցյալ Փրկչի հրաշափառ հարությունը:

Նրավիրում ենք ձեզ պահեցողության այս շրջանին, որպեսզի ամեն մեկդ, ինչ ձևով որ կարող եք, ձեր թերությունները ուղղեք. փորձեցեք ուղղել, արդարանալ և մաքրությամբ Սուրբ Սեղանին մոտենալ, այժմ և հավիպյանս հավիպենից ամեն: